# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 11 - 12 (16712) ՇԱԲԱԹ 9 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՈՒՈՐՏ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԳՅՈՒՂԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԻԱՆԱԼԻ ՁԵՎԱՉԱՓ Է»



*Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն գտնում է, որ գյուղի աջակցության ծրագիրը հիանալի ձեւաչափ է, որի շրջանակներում, կառավարությունը ստանում է լավ խորհուրդներ եւ հանձնարարականներ, ինչը թույլ է տալիս կարգավորել տարածաշրջանային քաղաքականությունը:*

Ըստ կառավարության ղեկավարի, որոշում է ընդունվել վերոնշյալ ծրագրի բյուջեն կրկնապատկել, հասցնել 40 միլիոն դոլարի, որը օգտագործվելու է այն նախագծերի իրականացման համար, որոնք երկրի ողջ մասշտաբով ընտրելու են 3700 գյուղերի բնակիչները:

- Դա իմ առաջնահերթային ծրագրերից մեկն է, քանի որ գյուղի բնակիչներն իրենք են որոշում, թե ինչի վրա պետք է ծախսվի գումարը, եւ ինչն է գյուղի համար առաջնային: Դա հիանալի պրակտիկա է, որը մենք ներդնում ենք: Պետական պաշտոնյաները պետք է իրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱԶԴԱՐԱՐՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

*Հայաստանի կառավարությունը հրապարակեց կառավարության ծրագրի նախագիծը, որը հաստատվեց գործադիր իշխանության կողմից եւ ուղարկվեց Ազգային ժողով:*



Ծրագրում նշվում է, որ առաջիկա հինգ տարիներին Հայաստանի կառավարության գործունեությունը միտված է լինելու Հայաստանում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաեւ բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ եւ ներառական տնտեսություն կառուցելուն:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

## ՎՐԱՍՏԱՆԻ 9-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆ ՍԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

***Փետրվարի 5-ին Թբիլիսիում բացվեց Վրաստանի 9-րդ գումարման խորհրդարանի գարնանային նստաշրջանը:***



Հիշեցնենք, որ սահմանադրական փոփոխությունների եւ խորհրդարանի նոր օրակարգի համաձայն, օրենսդիր գերագույն մարմնի լիագումար նիստերը անցկացվելու են Թբիլիսիում գտնվող պալատում:

Սահմանված աշխատակարգի համաձայն, գարնանային նստաշրջանի մեկնարկին խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն հանդես եկավ օրենսդրական մարմնի գործունեության մասին առաջին հաշվետվությամբ, ներկայացրեց 2019 թվականի համար նախատեսված ռազմավարական ծրագիրը:

Ինչպես իր ելույթում նշեց խորհրդարանի խոսնակը, 2019 թվականը լինելու է խորհրդարանի վերահսկիչ իրավասությունների նորովի մտածելակերպի եւ իրականացման ինտենսիվու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

***Փետրվարի 1-ին եւ 6-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին աշխատանքային հանդիպումներ ունեցավ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի եւ Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի հետ:***



Ինչպես հանդիպումից հետո հայտարարեց Վրաստանի նախագահը, Իրակլի Կոբախիձեի հետ հանդիպմանը քննարկված հարցերի թվում էր նաեւ նախագահի՝ փետրվարին Փարիզ կատարելիք այցի թեման: Ինչ վերաբերում է Սալոմե Զուրաբիշվիլու Կախա Կալաձեի հետ հանդիպմանը, քաղաքապետը ներկայացրել է 2019 թվականի համար ծրագրված եւ ներկայումս իրականացվող նախագծերը: Հանդիպմանը խոսել են նաեւ երկրի ներսում եւ միջազգային ասպարեզում ընթացիկ գործընթացների մասին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ

## ՄԻԽԵԻԼ ԲԱՏԻԱՇՎԻԼԻ. «ՈԼՈՐՏՈՒՄ ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼԻՐ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ»

### ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԿԱՎԵԼԱՆԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ



***Երկու օրվա ընթացքում՝ փետրվարի 7-8-ը, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին հրավիրված խորհրդարանական լսումների ընթացքում, որոնք տարվում էին հարցուպատասխանի ֆորմատով, երկրի օրենսդիրների առջեւ ելույթ ունեցավ իր գլխավորած գերատեսչությունում իրականացվող եւ ծրագրված բարեփոխումների հաշվետվությամբ:***

Նախարարի խոսքով, կրթության համակարգում ծրագրվում են համալիր բարեփոխումներ, որոնք նախատեսում են բազմաթիվ փոփոխություններ, ինչպես նախադպրոցական, այնպես էլ՝ ընդհանուր, մասնագիտական, բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտներում:

Այդ բարեփոխումների շրջանակներում, 2021-2023 թվականների դպրոցական պատրաստության ծրագիրը կապահովվի Վրաստանի բոլոր աշակերտների համար: Բացի այդ, ներդրվելու են նոր կրթական ծրագրեր, որոնք հիմնվելու են ինկլյուզիվ եւ քաղաքացիական կրթության սկզբունքներին: Մշակվելու եւ հաստատվելու է ուսուցիչների սերտիֆիկացման նոր մոդելը եւ աշխատավարձային քաղաքականությունը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ՝ «ԿԱՐՄՐՈՒԿԻ» ԲՌՆԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

*Հայաստանի առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի հրամանով, Հայաստանը Վրաստանին կտրամադրի 30 000 դոզա «Կարմրուկի» պատվաստանյութ, որպեսզի հարեւան երկիրն ավելի արդյունավետ ու արագ պայքարի «Կարմրուկի» բռնկումների դեմ: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել Արսեն Թորոսյանը:*



- Երեկ խոսեցի Վրաստանի իմ գործընկեր Դավիթ Սերգեենկոյի հետ Վրաստանում «Կարմրուկի» դեպքերի բռնկումների մասին: Նա ինձ հայտնեց, որ մինչեւ օրս արձանագրվել է «Կարմրուկի» 1028 նոր դեպք, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 90-ականներին բազմաթիվ երեխաներ չեն պատվաստվել «Կարմ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

## ՎՐԱՍՏԱՆԻ 9-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆ ՍԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան տեսանկյունից տարբերվող: Ըստ Իրակլի Կոբախիձեի, գործադիր իշխանությունների վերահսկումը խորհրդարանի առաջնահերթություններից մեկն է:

- Այս տեսանկյունից 2018 թվականը շատ լարված էր: Ստեղծվել էր Խորավայի փողոցում տեղի ունեցած հանցագործության արդյունքում երկու երիտասարդների սպանության փաստը ուսումնասիրող ժամանակավոր հետաքննչական հանձնաժողով, որում վրացական խորհրդարանի պատմության մեջ առաջին անգամ, անդամների մեծամասնությամբ ներկայացված էր խորհրդարանային փոքրամասնությունը: Հանձնաժողովը ղեկավարում էր խորհրդարանային փոքրամասնության լիդերներից մեկը: Նշված հանձնաժողովն ընդունեց եզրահանգում, որից հետո խորհրդարանը գրանցեց իր դիրքորոշումը: Կարեւոր է, որ այդ գործը դեռեւս քննության ընթացքի մեջ է, եւ այն խիստ վերահսկվում է խորհրդարանի կողմից: 2018 թվականին խորհրդարանին է ներկայացվել կառավարության եւ այլ սահմանադրական մարմինների, այդ թվում՝ Վրաստանի ժողովրդական պաշտպանի, Վրաստանի ազգային բանկի, պետական աուդիտի ծառայության հաշվետվությունները: Խորհրդարանի լիագումար կամ կոմիտեական նիստերին պարբերաբար ելույթ էին ունենում նախարարները կամ նրանց տեղակալներն ու այլ սահմանադրական մարմինների ղեկավարները,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:



Իրակլի Կոբախիձեի հայտարարությամբ, մեծացել է խորհրդարանի դերը պաշտպանության եւ անվտանգության ոլորտ մտնող գերատեսչությունների վերահսկման տեսանկյունից:

Նշենք, որ, խորհրդարանի գարնանային նստաշրջանի բացմանը եւ դրա մեկնարկին, խորհրդարանի նախագահի ելույթին ներկա էին վարչապետ Մամուկա Բախտաձեն, նախարարական կաբինետի անդամներն ու Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

ՈԼՈՐՏ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԳՅՈՒՂԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԻԱՆԱԼԻ ՁԵՎԱՉԱՓ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կանացնեն այն որոշումները, որոնք ընդունվում են բնակչության, տվյալ պարագայում գյուղի բնակչության կողմից: Կառավարման համակարգում աշխատող ոչ մի պաշտոնյա նրանցից քաջատեղյակ չէ առաջնահերթությունների հարցում: Հազարից ավելի գյուղերում արդեն անցկացվել են ժողովներ, որոնց մասնակցել են նախարարներն ու փոխնախարարները: Դրանց ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաեւ խորհրդականներն ու տեղի ինքնակառավարման ներկայացուցիչները,- հայտարարեց վարչապետը:

Իր խոսքում, վարչապետն անդրադարձավ նաեւ ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպության կողմից Վրաստանում իրականացվելիք 2 միլիոնանոց նախագծին:

Գյուղի զարգացմանն ուղղված նախագծի շուրջ համաձայնագիրը Բեռլինում ստորագրել էին Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին ու Վրաստանում ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչ Ռայմոնդ Յալը: Նախագիծը ֆինանսավորելու է Ավստրիայի զարգացման գործակալությունը եւ հետապնդում է Վրաստանում գյուղատնտեսական արտադրության զարգացման, բնական ռեսուրսների կառավարման եւ արտադրությունում էկոլոգիական մաքուր մեթոդների ներդրման, ինչպես նաեւ վրաց ֆերմերների մրցունակության բարձրացման նպատակ:

Սկզբնական փուլում ծրագրվում է մշակել պիլոտային ծրագրեր Վրաստանի երկու տարածաշրջանների չորս գյուղերի համար:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ՝ «ԿԱՐՄՐՈՒԿԻ» ԲՌՆԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րուկի» դեմ: Ես տեղեկացա նաեւ, որ օրական արձանագրվող 50-60 դեպքը դարձել է 35, շնորհիվ այն հակահամաճարակային միջոցառումների, որոնք իրականացվում են Վրաստանում, այդ թվում՝ 20-40 տարեկան ազգաբնակչության ինտենսիվ պատվաստումների,- գրել է նախարարը:

Նրա գրառմամբ, բարեբախտաբար, Հայաստանում «Կարմրուկի» տեղական վերջին դեպքն արձանագրվել է 2007թ.՝ շնորհիվ երկրում «Կարմրուկի» դեմ պատվաստումների բարձր ցուցանիշների: Վերջին բերովի դեպքն արձանագրվել էր 2018թ. դեկտեմբերին ՌԴ-ից ժամանած ուղեւորի մոտ եւ կրկին բարեբախտաբար տարածում չի ունեցել երկրում:

Նշենք, որ տարեսկզբից Վրաստանում արձանագրվել է «Կարմրուկով» հիվանդանալու կլինիկական եղանակով հաստատված 580 դեպք: Ամենից շատ դեպքերը Թբիլիսիում են, ինչպես նաեւ Սամեգրելոյի եւ Կախեթիի տարածաշրջաններում: Այս տարի «Կարմրուկի» դեմ պատվաստումը Վրաստանի բոլոր քաղաքացիների համար կատարվում է անվճար:

## ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱՆՁՆԵՑ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԵՂԱԴՐՎՈՂՆԵՐԻՆ

***Փետրվարի 5-ին Վրաստանի իրավասու մարմինների կողմից որոշում է կայացվել բավարարել հետախուզվողներ Արմեն Կարադավիդովին եւ Ալբերտ Բլբուլյանին, քրեական հետապնդման ենթարկելու նպատակով, Հայաստանի իրավապահ մարմիններին հանձնելու մասին Հայաստանի Գլխավոր դատախազության միջնորդությունը: Փետրվարի 5-ին նրանք տեղափոխվել են Հայաստան:***

Նշենք, որ 2017թ. սեպտեմբերի 14-ին Երեւանի Հանրապետության փողոցում, «Թուֆենկյան» հյուրանոցի մոտ, «Մակարով» ատրճանակից եւ «ԱԿ» ինքնաձիգից կրակոցներ էին արձակվել երկու քաղաքացու ուղղությամբ, ինչի հետեւանքով մեկ մարդ սպանվել էր, մեկը՝ վիրավորվել: Նշված հանցագործությունը կատարելու համար, սեպտեմբերի 15-ին որոշում էր կայացվել Ա. Բլբուլյանին, Ա. Կարադավիդովին ու Ռ. Խաչատրյանին ներգրավել՝ որպես մեղադրյալներ, եւ նրանց նկատմամբ հայտարարվել էր հետախուզում: 2017թ. սեպտեմբերի 22-ին, ոստիկանության կողմից Ռ. Խաչատրյանը հայտնաբերվել էր Կոտայքի մարզում ու բերման ենթարկվել: Իսկ մյուս երկու հետախուզվողները՝ Ա. Բլբուլյանն ու Ա. Կարադավիդովը, 2017թ. հոկտեմբերի 29-ին հայտնաբերվել էին Վրաստանի տարածքում:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՀԱՑԵԼ Է ԹԲԻԼԻՍԻԻ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՎԱՆՈ ՋՈԴԵԼԱՎԱՆ

***Փետրվարի 6-ին, 61 տարեկան հասակում, 2017 թվականին տեղի ունեցած վթարից հետո անգիտակից վիճակում, մահացել է Թբիլիսիի նախկին քաղաքապետ Վանո Ջոդելավան:***



Վանո Ջոդելավան 2017 թվականին հուլիսի 27-ին ճանապարհատրանսպորտային պատահարի էր ենթարկվել վրաց-ադրբեջանական սահմանից Թբիլիսի տանող ճանապարհին, Թբիլիսիի մուտքի մոտ, Ներքին Փոնիճալա թաղամասում: Միաժամանակ իրար էին բախվել «Օպել», «Մերսեդես» եւ «Հոնդա» մակնիշի ավտոմեքենաները: Տեղում մահացել էր «Օպել» մակնիշի մեքենայի 35-ամյա վարորդը: Նա ուժեղ հարված էր ստացել գլխին: Նրա առողջական վիճակը շատ ծանր էր, գտնվում էր անգիտակից վիճակում:

Մինչեւ վերջին ժամանակներս Ջադելավան բուժվում էր Թբիլիսիի Առաջին կլինիկական հիվանդանոցում:

Հիշեցնենք, որ Վանո Ջոդելավան 1997-1998 թվականներին եղել է Փոթի նավահանգստային քաղաքի քաղաքապետը, իսկ 1998 թվականի օգոստոսի 10-ից մինչեւ 2004 թվականի ապրիլի 19-ը զբաղեցրել է Թբիլիսիի քաղաքագլխի պաշտոնը:

Նրա քաղաքապետության օրոք, Երեւանի քաղաքապետարանի, Վրաստանում Հայաստանի դեսպանության, Վրաստանի հայերի միության համատեղ մասնակցությամբ, իրականացվեց Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնի վերակառուցումը:

*«Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես ցավում է վիրահայերի բարեկամ, Թբիլիսիի նախկին քաղաքապետ Վանո Ջոդելավայի անժամանակ մահվան կապակցությամբ եւ իր ցավակցությունն է բերում հանգուցյալի ընտանիքին եւ մերձավորներին:*



### ՆԱՏՕ
### ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՆ՝ ԱԼՅԱՆՍԻ ԱՆԴԱ՞Մ...

*Փետրվարի 6-ին ՆԱՏՕ-ի մասնակից 29 երկրների ներկայացուցիչները Բրյուսելի կենտրոնակայանում արձանագրություն են ստորագրել դաշինքին Հյուսիսային Մակեդոնիայի անդամակցության մասին:*

*Երկիրը պաշտոնապես կսկսի մասնակցել Հյուսիսատլանտյան դաշինքի հաստատությունների աշխատանքին, բայց առայժմ՝ հրավիրված անդամի կարգավիճակով: Այն բանից հետո, երբ ՆԱՏՕ-ի բոլոր 29 երկրները կվավերացնեն արձանագրությունը, Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետությունը կդառնա դաշինքի 30-րդ անդամը:*

### ՈՒԿՐԱԻՆԱ
### ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍԵԼ Է 34-Ի

*Ուկրաինայի նախագահական ընտրություններին, որոնք տեղի կունենան մարտի 31-ին, մասնակցող թեկնածուների թիվը հասել է 34-ի:*

*Համաձայն նախնական հարցումների, ընտրություններում առաջատարը շոումեն Վլադիմիր Զելենսկին է, ում իր աջակցությունն է հայտնել հարցվողների 21,9 տոկոսը, հաջորդը Յուլյա Տիմոշենկոն է՝ 19,2, իսկ նրան հաջորդում է գործող նախագահ Պյոտր Պորոշենկոն՝ 14,8 տոկոս:*

### ՎԵՆԵՍՈՒԵԼԱ
### ԽՈՒԱՆ ԳՈՒԱՅԴՈՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՆ ԵՐԿՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԱԽԱԳԱՀ

*Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Ֆրանսիան եւ Ավստրիան ճանաչեցին Խուան Գուայդոյի լեգիտիմությունը, որն իրեն հռչակել է Վենեսուելայի ժամանակավոր նախագահ:*

*Ավելացնենք, որ քաղաքական գործչին արդեն Վենեսուելայի ժամանակավոր ղեկավար են ճանաչել ԱՄՆ-ը, Կանադան, Արգենտինան, Ավստրալիան, Իսրայելը, Վրաստանը, Բրազիլիան, Չիլին, Կոլումբիան, Պարագվայը, Պերուն, Եվրամիության մի քանի երկրներ, այլ պետություններ, ինչպես նաեւ Ամերիկյան պետությունների կազմակերպությունը: Մադուրոյին աջակցելու նպատակով, հանդես են եկել Ռուսաստանը, Բելառուսը, Բոլիվիան, Իրանը, Կուբան, Նիկարագուան, Սալվադորն ու Թուրքիան: Մեքսիկան եւ Ուրուգվայը դեմ են արտահայտվել արտաքին միջամտությանն ու միջնորդություն են առաջարկել հանրապետության ընդդիմության եւ կառավարության միջեւ բանակցությունների կազմակերպման հարցում:*

### ՖՐԱՆՍԻԱ-ԻՏԱԼԻԱ
### ԼԱՐՎԵԼ ԵՆ ԴԻՎԱՆԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Լարվել են դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի եւ Իտալիայի միջեւ: Ֆրանսիան ընդունել է հարեւան երկրից դեսպանին ետ կանչելու որոշում:*

*Պաշտոնական Փարիզի որոշման պատճառը Իտալիայի վարչապետ Լուիջի Դի Մայոյի գործողություններն են: Փետրվարի 5-ին իտալացի քաղաքական գործիչը Փարիզի մոտակայքում հանդիպել էր դեղին բաճկոնավորների շարժման լիդերների հետ: Դրանից հետո, Ֆրանսիայի կառավարությունը կոչ է արել Իտալական կողմին չմիջամտել նրանց ներքին քաղաքականությանը:*

*Ֆրանսիայի դիվանագիտական գերատեսչության հայտարարությամբ, երկու երկրների միջեւ նման լարվածություն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո չի եղել:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

# ՆՈՐ ՕՐԵՆՍԳԻՐՔ՝ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ



***Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, հանդես գալով խորհրդարանի բյուրոյի նիստում, հայտարարեց, որ երկրում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա են էական խնդիրներ:***

Իրակլի Կոբախիձեն ներկայացրեց երեխաների իրավունքների պաշտպանության օրենսգիրքը, որի վրա աշխատել են խորհրդարանի՝ Մարդու իրավունքների եւ քաղաքացիական ինտեգրման եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (UNICEF):

- Մենք լուրջ մարտահրավեր ունենք Վրաստանում երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացնելու մեխանիզմների տեսանկյունից: Երկրում երեխաների նկատմամբ բռնության մասշտաբներն իրապես լուրջ են, ինչը մեր կողմից անհապաղ արձագանքելու եւ միջամտելու անհրաժեշտության մասին է խոսում,- ասել է Կոբախիձեն:

Ըստ նրա, նոր օրենսգրքի հիմնական խնդիրը միասնական ռազմավարության մշակումն է: Այսինքն՝ ստեղծել միասնական պետական այնպիսի քաղաքականություն եւ մեկ ստանդարտ, որը հասարակական միջավայրում կդառնա երեխաների պաշտպանության հստակ երաշխիք:

Այս համատեքստում նախաձեռնող խումբը կարեւորում է նաեւ երեխաների եւ դեռահասների ճիշտ զբաղվածությունը, ինչը կբացառի նրանց ձգտումը դեպի ազարտային խաղեր, թմրակախվածություն եւ վնասակար այլ սովորույթներ: Երեխաները պետք է իրենց էներգիան ուղղեն դեպի առողջ ապրելակերպ, դեպի կրթություն եւ այնպիսի զբաղմունքներ, որոնք կդառնան հետագայի հաջողության գրավականը:

Երեխաների իրավունքների պաշտպանության օրենսգիրքը խորհրդարանի քննարկմանը կներկայացվի գարնանային նստաշրջանի ընթացքում: Երեխաների իրավունքների պաշտպանության հատուկ կոդեքս մշակելը ՄԱԿ-ի խորհրդատվություններից մեկն է:

# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

***Վրաստանի խորհրդարանի մեծամասնությունը ներկայացնող 9 պատգամավորներ օրենսդիր մարմնի քննարկմանն են ներկայացրել «Ընդհանուր դատարանների մասին» օրենքի փոփոխությունները, որոնց համաձայն, շրջանային եւ բողոքարկման դատարաններում դատավորների անժամկետ նշանակումը պետք է կանգնեցվի մինչեւ 2024 թվականի հունվարի 31-ը:***

Խորհրդարանի պատգամավորներ Էկա Բեսելիայի, Զվիադ Կվածանտիրաձեի, Ալեքսանդր Էրքվանիայի, Գեդեւան Փոփխաձեի, Կոբա Նարչեմաշվիլու, Լեւան Գոգիչաիշվիլու, Լեւան Կոբերիձեի, Դավիթ Ճիճինաձեի եւ Օթար Չրդիլելու ստորագրությամբ օրինանախագիծն արդեն գրանցվել է խորհրդարանում:

Ինչպես նշեց Վրաստանի խորհրդարանի իրավական հարցերով կոմիտեի նախկին նախագահ Էկա Բեսելիան, նախաձեռնությունը հիմնված է օրենքի անցումային դրույթի վրա, որի հաշվառմամբ, հնարավոր է մինչեւ 2025 թվականը արդարադատության բարձրագույն խորհուրդը չօգտագործի դատավորների անժամկետ նշանակման իրավասությունը եւ դատարավորների համար նշանակի փորձառնական ժամանակաշրջան:

- Նախաձեռնությունը հիմնված է ինչպես Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականների, այնպես էլ՝ Վրաստանի սահմանադրության վրա»,- հայտարարեց Էկա Բեսելիան:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

# ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՀՆԱ-Ի 5 ՏՈԿՈՍՈՎ ԱՃԻ ԿԱՆԽԱԳԾՈՒՄԸ

***Փետրվարի 7-ին Վրաստանի Ազգային բանկը հրապարակեց ֆինանսական քաղաքականության հաշվետվությունը, ըստ որի, 2019 թվականին բանկը հաստատում է երկրի տնտեսական 5 տոկոս աճի կանխագծումը:***

Ինչպես նշված է հաղորդագրության մեջ, վերջին ամիսներին տնտեսական աճի տեմպերի թուլացումը ժամանակավոր բնույթ է կրում: «ՀՆԱ-ի աճի հարցում դրական ավանդ կներդնեն ինչպես մասնավոր արտահանումները, այնպես էլ՝ սպառումը, ներդրումների ավելացումը, ինչին բազային կարգավորման համապատասխան, կնպաստեն կառավարության կողմից ծրագրված կապիտալ ծախսերը ու վարկերի ավելացումը»,- նշված է հաղորդագրությունում:

Փաստաթղթում նշված է նաեւ, որ, արժեզրկման ռիսկերի չեզոքացման համար, Ազգային բանկը վերջին ժամանակահատվածում պահպանում է չափավոր խստացված ֆինանսական քաղաքականություն: Արդյունքում սպասվում է, որ ընթացիկ տարվա առաջին կեսին տարեկան կտրվածքով արժեզրկումը կմոտենա նպատակային ցուցանիշի 3 տոկոսին: «Ինչպես 2018 թվականին գնաճի վրա հիմնական ազդեցությունը կգործեն միանշանակ գործոնները՝ ծխախոտեղենի աքցիզի ավելացման եւ հացամթերքների գների ավելացման տեսքով: Այս գործոնները, ինչպես նաեւ ազգային տարադրամի փոխանակման կուրսի արժեզրկման արդյունքում ավելացած ծախսերը մասնակիորեն կհավասարակշռեն ընդհանուր թույլ պահանջարկը»,- ասված է հաղորդագրության մեջ:

Ինչ վերաբերում է վերաֆինանսավորման սակագներին, ապա, ներկա դրությամբ, այն կազմում է տարեկան 6,75 տոկոս: Կենտրոնական բանկի տվյալներով, միայն երկու տարի անց, նա կմոտենա չեզոք մակարդակի, որը կկազմի տարեկան 5,5-6 տոկոս: Ընդսմին, Կենտրոնական բանկը դրական միտում է ընկալում երկրի վճարման ընթացիկ հաշվեկշիռը, որի սալդոն, նախորդ տարվա երրորդ եռամսյակում առաջին անգամ անկախ Վրաստանի պատմության մեջ, դրական էր եւ կազմեց 11,9 միլիոն դոլար, այն ժամանակ, երբ նախորդ եռամսյակում վավերացվել էր 364 միլիոն դոլարի պակասորդ, իսկ 2017 թվականի երրորդ եռամսյակում պակասորդը հասել էր 124,9 միլիոն դոլարի:

Նշենք, որ Վրաստանի կառավարությունը, կանխագծելով 2019 թվականի տնտեսական գործունեությունը, ծրագրել է ՀՆԱ-ի 4,5 տոկոսի աճ: Ըստ կառավարության, արժեզրկումը կտատանվի 3 տոկոսի մակարդակում, իսկ ընթացիկ հաշվի պակասորդը կկազմի ՀՆԱ-ի 8,5 տոկոսը:



## ԱՆՐԻ ՕԽԱՆԱՇՎԻԼԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ



*Փետրվարի 6-ին Վրաստանին խորհրդարանը՝ 98 կողմ, 4 դեմ ձայներով, 33-ամյա Անրի Օխանաշվիլուն ընտրեց խորհրդարանի իրավական հարցերով կոմիտեի նախագահ: Օխանաշվիլին մինչեւ 2016 թվականը եղել է խորհրդարանի աշխատակազմի ղեկավարը:*

*Հիշեցնենք, որ իրավական հարցերով հանձնաժողովի նախագահի պաշտոնը թափուր էր մնացել, երբ անցյալ տարվա վերջին նշված պաշտոնից հրաժարական տվեց Էկա Բեսելիան: Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակվել Դավիթ Մաթիկաշվիլին:*

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՆԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 1,3%

*Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, ընթացիկ տարվա հունվար ամսին Վրաստանում գնաճը կազմել է 1,3 տոկոս: Միեւնույն ժամանակ, տարեկան գնաճը կազմել է 2,2 տոկոս:*

*Ըստ վիճակագրության, նախորդ տարվա համեմատ, սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքների խմբում գրանցվել է գների 3,2 տոկոս աճ, որը 0,98 տոկոսային կետով արտացոլվում է գնաճի ընդհանուր ցուցանիշի վրա: Գներն աճել են բանջարեղենի (15,8 տոկոս), մրգի եւ խաղողի (5,8 տոկոս), կաթի, պանրի ու ձվի (4,7 տոկոս), հացի եւ հացամթերքի (1,4 տոկոս) ու ձկան (1,4 տոկոս) ենթախմբերում: Ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի գներն աճել են 5,8 տոկոսով, որը 0,39 տոկոսային կետով արտացոլվում է ընդհանուր գնաճի վրա: Մասնավորապես, ծխախոտային արտադրանքի գներն աճել են 12,5 տոկոսով:*

## ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԸ

*Վրաստանի ազգային բանկի պահուստները մեկ ամսում ավելացել են մոտ 116 միլիոնով: 2019 թվականի հունվարի 31-ի տվյալներով, պահուստների ծավալը կազմում է 3,4 մլրդ դոլար, որը Վրաստանի համար պատմական ցուցանիշ է: Ազգային բանկի տվյալներով, արտասահմանյան արժույթի պահուստների ծավալը 3,2 մլրդ դոլար է, իսկ վարկերի հատուկ թույլտվությունը (SDR) կազմում է 202 մլն դոլար: Հունվարին ազգային բանկը գնել է 85 մլն դոլար:*

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

# ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ «ԳՅՈՒՂԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

***Ախալքալաքիի մունիցիպալիտետի բոլոր 64 գյուղերում հունվարի 27-ին սկսվել եւ մինչեւ փետրվարի 27-ը կշարունակվեն գյուղական ժողովներ, որոնց ընթացքում տեղի բնակիչներն ընտրում են այն առաջնահերթությունները, որոնք ֆինանսավորվելու են «Գյուղի աջակցության ծրագրով»:***

«Անցած երկուշաբթի օրը՝ փետրվարի 4-ին, նման հանդիպում կայացավ մունիցիպալիտետի Կոթելիա եւ Բարալեթ գյուղերում»,- հաղորդում է «Jnews» կայքը: Հանդիպմանը մասնակցեցին նաեւ Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի ներկայացուցիչներ:

Նշենք, որ 120 ընտանիք ունեցող Կոթելիա գյուղին վերոնշյալ ծրագրով հատկացվում է 16 հազար լարի:

Ինչպես նշեց Կոթելիայի գյուղապետ Կախի Ջուրաբիշվիլին, գյուղում շատ խնդիրներ կան:

- Մենք չունենք ակումբ, մանկապարտեզ, ճանապարհներն անբարեկարգ են, բայց այդ աշխատանքները մենք չենք կարող իրականացնել այս գումարով: Հետեւաբար, մենք կընտրենք այն աշխատանքները, որոնք կարելի կլինեն իրականացնել 16 000 լարիով,- ասաց նա:

Ախալքալաքիի զարգացման խմբի (LAG) անդամ Խաթունա Վելիջանաշվիլու խոսքով, առաջնահերթ անհրաժեշտ է կառուցել ծիսակատարությունների տան ջրամատակարարման խողովակն ու կոյուղագիծը:

Կոթելիա գյուղի բնակչուհի Զամիրա Ղավրելիշվիլին գտնում է, որ բացի կոյուղագծից ու ջրախողովակից, հարկավոր է անասունների տեղաշարժման համար կամուրջներ կառուցել:

Քննարկումից հետո, առաջնահերթություններ համարվեցին ծիսակատարությունների տան ջրամատակարարման խողովակի եւ կոյուղային համակարգի կառուցումը, անասունների տեղափոխման համար միջգյուղական կամուրջների կառուցումը, ամբուլատորիայի վերանորոգումը եւ նոր գույքագնումը, գյուղական ճանապարհների վերականգնումը, ջրանցքի մաքրման աշխատանքները:

Փետրվարի 4-ին նման հանդիպում կայացավ նաեւ Բարալեթ գյուղում: Տեղացիները ներկայացրին գյուղի առջեւ ծառացած առաջնահերթությունները, թեպետ ի վերջո որոշեցին առաջնահերթությունը տալ երիտասարդությանը գյուղում պահելուն:

- Մեր ապագան մեր երիտասարդներն են: Հարկավոր է ստեղծել այնպիսի ժամանցային վայրեր, որտեղ նրանք կարող են որեւէ բանով զբաղվել,- ասաց Բարալեթի բնակիչ Դերենիկ Պետրոսյանը:

Բարալեթիում ապրում է 200 ընտանիք, մոտ 1021 մարդ եւ նրանց գյուղին հատկացված գումարը նույնպես կազմում է 16 000 լարի:

Այսպիսով, բարալեթցիները ծրագրի շրջանակներում գերադասությունը տվեցին երիտասարդների համար 11 000 լարիով մշակույթի տան նախամուտքի վերանորոգմանն ու բարեկարգմանը (11 հազար լարի) եւ անասունների տեղաշարժի համար երկու կամրջի կառուցմանը (5 հազար լարի):

***ՇՈՒՇԱՆ ՇԻՐԻՆՅԱՆ***
*Ախալքալաքիի մունիցիպալիտետ*

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

სახელმწიფო სერვისების განვითარების სააგენტო

# Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ




*«Վրաստանի քաղաքացիության մասին» օրենքում անցյալ տարի կատարված փոփոխությունների արդյունքում, այլ երկրի քաղաքացիություն ստացած եւ դրա արդյունքում Վրաստանի քաղաքացիությունը կորցրած երկրի նախկին քաղաքացիներին, տրվեց Վրաստանի քաղաքացիությունը վերականգնելու հնարավորություն: Հաշվի առնելով թեմայի կենսական նշանակությունն ու հրատապությունը՝ «Վրաստան» թերթի խմբագրությունը Վրաստանի քաղաքացիության վերականգնման հարցերով դիմեց Վրաստանի արդարադատության նախարարության պետական սպասարկումների զարգացման գործակալությունը:*

*Ստորեւ ներկայացնում ենք խմբագրության հարցերին գործակալությունից ստացված պատասխանները:*

***- Ո՞ւմ պետք է դիմել Վրաստանի քաղաքացիության շնորհման վերականգնման կարգով:***

- Վրաստանի քաղաքացիության հարցով շահագրգռված անձը դիմումը անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով պետք է ներկայացնի Վրաստանի արդարադատության նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձ պետական սպասարկումների զարգացման գործակալության տարածքային ծառայությանը, արդարադատության տան մասնաճյուղերին, հասարակական կենտրոններին, արտասահմանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կամ հյուպատոսական հաստատություններին:

***- Այլ երկրի քաղաքացիություն ունենալու դեպքում, Վրաստանի քաղաքացին ինչպե՞ս կարող է պահպանել Վրաստանի քաղաքացիությունը:***

- Վրաստանի քաղաքացին պահպանում է երկրի քաղաքացիությունը, եթե նա մինչեւ այլ երկրի քաղաքացիության ընդունումը Վրաստանի պետությունից ստանում է համաձայնություն՝ Վրաստանի քաղաքացիության պահպանման հարցով:

«Վրաստանի քաղաքացիության մասին» Վրաստանի օրգանական օրենքի նախորդ խմբագրության հիման վրա, Վրաստանի քաղաքացիություն ունեցող անձինք այլ երկրի քաղաքացիություն ընդունելու դեպքում, կորցնում էին Վրաստանի քաղաքացիությունը: Իսկ օրենքում իրականացված փոփոխությունների համաձայն, այն պահպանվում է: Այն անձանց համար, ովքեր արդեն հանդիսանում են այլ երկրի քաղաքացի, սակայն դեռեւս չեն կորցրել Վրաստանի քաղաքացիության կարգավիճակը, հնարավորություն է տրվում օրենքում կատարված փոփոխությունների կիրարկումից մեկ տարվա ընթացքում (մինչեւ 2019 թվականի օգոստոսի 15-ը) պահանջել Վրաստանի քաղաքացիության պահպանում:

***- Եթե Վրաստանի քաղաքացին ընդունել է այլ երկրի քաղաքացիություն, սակայն դեռեւս չի կորցրել Վրաստանի քաղաքացիությունը, ինչպե՞ս է վարվելու այդ դեպքում:***

- Անձը, որն արդեն ընդունել է այլ երկրի քաղաքացիություն, սակայն դեռեւս չի կորցրել Վրաստանի քաղաքացիության կարգավիճակը, տրվում է հնարավորություն օրենքում կատարված փոփոխությունների կիրարկումից մեկ տարվա ընթացքում (մինչեւ 2019 թվականի օգոստոսի 15-ը) պահանջել Վրաստանի քաղաքացիության պահպանում:

***- Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ Վրաստանի քաղաքացիության հարցի քննարկման համար, եւ ի՞նչ ժամկետներ են նախատեսված դրա համար:***

- Վերականգնման կարգով Վրաստանի քաղաքացիության շնորհման հարցի քննարկման համար, պետք է ներկայացնել սահմանված ձեւաթղթով նախատեսված լրացված դիմում (այն լրացվում է տեղում), լուսանկար՝ 3X4 չափով, այն փաստաթղթերի պատճենները, որով կհաստատվի, որ շահագրգռված անձը, օրենքի համաձայն, ուներ Վրաստանի քաղաքացիություն, այլ երկրի քաղաքացիության իրավունքը հաստատող փաստաթուղթ, Վրաստանի քաղաքացիությունը կորցնելը հաստատող փաստաթուղթ:

***- Ի՞նչ սակագին է սահմանված դրա համար:***

- Վրաստանի քաղաքացիության պահպանման հարցի քննարկումից եւ համապատասխան եզրակացության դիմումը ներկայացնելուց հետո, օրացուցային 80-րդ օրվա նախապատրաստման համար, սպասարկման սակագինը կազմում է 250 լարի: 60-րդ օրվա նախապատրաստման համար, սպասարկման սակագինը կազմում է 250 լարի եւ արագացված սպասարկման սակագինը՝ 100 լարի: 30 օրացուցային օրվա ժամկետում նախապատրաստման համար սպասարկման սակագինը կազմում է 250 եւ արագացված սպասարկման սակագինը՝ 250 լարի:

Վրաստանի քաղաքացիության վերականգնման պահանջի ժամանակավոր իրավունքի հիման վրա վերականգնման կարգով, Վրաստանի քաղաքացիության շնորհման հարցի քննարկումից եւ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո, օրացուցային 80-րդ օրվա նախապատրաստման համար սպասարկման սակագինը կազմում է 250 լարի: 60-րդ օրվա նախապատրաստման համար, սպասարկման սակագինը կազմում է 250 եւ արագացված սպասարկման սակագինը՝ 100 լարի: 30 օրացուցային օրվա ժամկետում նախապատրաստման համար, սպասարկման սակագինը կազմում է 250 եւ արագացված սպասարկման սակագինը՝ 250 լարի:

**Արտասահմանում վճարելիք սակագները ու սպասարկման ժամկետները**

Վրաստանի քաղաքացիությունը վերականգնելու պահանջի ժամանակավոր իրավունքի հիման վրա վերականգնման կարգով, Վրաստանի քաղաքացիության շնորհման հարցի քննարկման եւ համապատասխան եզրակացության օրացուցային 80-րդ օրվա ընթացքում, նախապատրաստման սակագինը 170 ԱՄՆ դոլար է: Վրաստանի քաղաքացիության պահպանման հարցի քննարկումից եւ համապատասխան եզրակացության դիմումը ներկայացնելու հետո, օրացուցային 80-րդ օրվա նախապատրաստելու համար սակագինը կազմում է 170 ԱՄՆ դոլար:

**Դիտողություն.** Վերականգնման կարգով Վրաստանի քաղաքացիության շնորհման հարցի քննարկման փուլում, անձը հանձնելու է վրաց լեզվի թեստ: Ձեւակերպվել են քննական նոր թեստեր, որոնք բոլորի համար մատչելի են www.sda.gov.ge կայք-էջում: Ցանկացողներին իրավունք է վերապահվում նախօրոք ծանոթանալ քննչական հարցերին եւ նախօրոք պատրաստվել թեստավորմանը:

**Ի՞նչ է վերաբերում անչափահասներին**

- Նշանակալից է այն, որ վերականգնման կարգով չափահաս անձի համար Վրաստանի քաղաքացիության շնորհման դեպքում, Վրաստանի քաղաքացիություն շնորհվում է նաեւ նրա անչափահաս երեխաներին: Արդեն 14 տարին լրացած անձը սույն հոդվածի հիման վրա, Վրաստանի քաղաքացիություն կարող է ստանալ նրա համաձայնությամբ:

Անչափահաս անձին Վրաստանի քաղաքացիության շնորհման հարցի քննարկման համար, պետք է ներկայացնել սահմանված ձեւաթղթով լրացված դիմում (լրացվում է տեղում), լուսանկար՝ 3X4 չափով, ծննդյան վկայական, այլ փաստաթղթերի պատճեններ, որոնցով հաստատվում է, որ անչափահասը օրենքի համաձայն, ունեցել է Վրաստանի քաղաքացիություն, վերականգնման կարգով անչափահասի ծնողների Վրաստանի քաղաքացիության շնորհումը հաստատող փաստաթուղթ, այլ երկրի քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ, Վրաստանի քաղաքացիություն կորցնելը հաստատող փաստաթուղթը, ծնողի համաձայնությունը (դիմումը լրացվում է տեղում), 14 տարեկանի դեպքում՝ անչափահասի համաձայնությունը:

Անչափահասը, որը Վրաստանի քաղաքացիության հետ միասին, այլ երկրի քաղաքացիությունը ստացել է ծննդյան օրվանից, Վրաստանի քաղաքացիությունը պահպանում է մինչեւ նրա 18 տարին լրանալը: Հին օրենքի համաձայն, ծնողը ինքնուրույն էր ընտրում այն երկրի քաղաքացիությունը, որը պահպանվելու էր երեխայի համար, իսկ օրենքում կատարված փոփոխությունների հիման վրա, երեխան մինչեւ չափահաս դառնալը կունենա երկքաղաքացիություն, իսկ չափահաս դառնալուց հետո, տրվում է հնարավորություն ինքնուրույն ընտրել այն երկիրը, որի քաղաքացիությունը ցանկանում է պահպանել: Վրաստանի քաղաքացիության պահպանում անչափահասներին թույլ է տրվում ծնողների կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Ծնողներից մեկի կողմից դիմումի ներկայացման դեպքում, Վրաստանի քաղաքացիության պահպանում անչափահասին թույլ է տրվում երկրորդ ծնողի համաձայնության դեպքում:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

# ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱՌՆԱ ՊԱՐՏԱԴԻՐ



*Վրաստանի հանրային հեռուստաընկերության տեղեկատվությամբ, համապատասխան օրինագծում «Վրաստանի տարածքում գրանցված տրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» փոփոխությունների համաձայն, Վրաստանում գրանցված ավտոմեքենաների սեփականատերերին կպարտավորեցնեն ապահովագրել իրենց տրանսպորտային միջոցները:*

*Փոփոխությունները ներկայացվեցին Վրաստանի խորհրդարանի բյուրոյի փետրվարի 4-ի նիստում:*

Փոփոխությունների համաձայն, քաղաքացիական պատասխանատվության գրանցման ժամանակ, ապահովագրական կողմը պարտավորվում է վճարել նյութական վնասի կամ կորստի փոխհատուցումը տուժող վարորդին կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, որը հասցվել է կյանքին, առողջությանը կամ գույքին:

Օրինագծում նշված է, որ պարտադիր ապահովագրության ձեռքբերում հնարավոր է ապահովագրական ընկերություններում, ապահովագրության գործակալներից կամ բրոքերներից, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով:

Եթե վարորդը չի կնքում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն, ապա տուգանվում է:

Օրինագծի հինգերորդ հոդվածը սահմանում է տրանսպորտային միջոցների կատեգորիաների նվազագույն եւ առավելագույն գները:

* Մոտոցիկլետների համար, որոնց աշխատանքային շարժիչի ծավալը 50 խոր.սմ -ից բարձր է՝ 75.00-110 լարի:

* Թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար, որոնց թույլատրելի զանգվածը 3500 կգ է, իսկ նստատեղերի քանակը (բացի վարորդի նստատեղից) չի գերազանցում ութը՝ 100-150 լարի:

* Ավտոբուսների համար, որոնց նստատեղերը (բացի վարորդի նստատեղից) գերազանցում են ութը՝ 160-240 լարի:

* Բեռնատարների համար, որոնց թույլատրելի զանգվածը գերազանցում է 3 500 կգ-ն՝ 210-310 լարի:

* Կցիչով ավտոմեքենաների համար՝ 50-75 լարի:

* Գյուղատնտեսական մեքենաների եւ հատուկ ինքնագնաց մեքենաների համար՝ 60-90 լարի:

Դրա հետ մեկտեղ, տուգանքի արձանագրումից հետո, վարորդին տրվում է 72 ժամ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գրանցման համար: Եթե այդ ժամանակահատվածում ապահովագրությունը չի կնքվում, ապա վարորդը կրկին տուգանվում է:

Օրինագծի համաձայն, ապահովագրվելու պարտականությունը չի տարածվում Վրաստանի պաշտպանության ուժերի տրանսպորտային միջոցների, ինչպես նաեւ ռազմական նպատակներով օգտագործվող տրանսպորտային միջոցների (բացառությամբ՝ ավտոբուսների, ավտոմեքենաների եւ տնտեսական տրանսպորտային միջոցների) վրա:

Նշված է, որ ապահովագրավճարների սահմանման ժամանակ հաշվի են առնվել նաեւ Համաշխարհային բանկի մասնագետների կողմից Վրաստանում թեթեւ մարդատար ավտոմեքենաների վիճակագրության ցուցանիշների հիման վրա հաշվարկված եւ տրամադրված տվյալները:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*